<<Քննարկված է>>
<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղի
N1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի
մանկավարժական խորհրդի 12.06.2023թ. թիվ 14 նիստում

Ծրագիր
Բանավեճ խմբակի

11-րդ դասարան

(շաբաթական 1 դասաժամ, տարեկան՝ 34)

Բացատրագիր

Բանավեճի ծրագիրը նախատեսված է ավագ դպրոցի համար:

Դասընթացի հիմնական խնդիրն է աշակերտների ձեռք բերած բանավիճելու կարողությունների և հմտությունների հիման վրա զարգացնել և խորացնել համապատասխան գիտելիքներ նախապատրաստելու մրցունակ, քաղաքակիրթ, բանիմաց, հանդուրժողական ու աջակցող անհատ:

Դասընթացը կօգնի հեշտությամբ հաղթահարելու մրցակցի հետ կիրթ հաղորդակցվելու, նրա արտահայտած տեսակետի, դիրքորոշման հետ համաձայնելու կամ չհամաձայնելու դժվարություններն ու խոչընդոտները:

Նպատակները

- Զարգացնել սովորողների բառապաշարը, լեզվամտածողությունը, տրամաբանությունը, լեզվական՝ բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողություններն ու հմտությունները, թիմային մտածողությունը:
- նպաստել միմյանց լսելու, հանդուրժելու ու օգնելու պատրաստակամություն դրսևորելու որակների ձևավորմանը, կամային հատկանիշների խորացմանը, աշխարհի ընկալման և մտահորիզոնի ընդլայնմանը, միջանձնային հարաբերությունների բարելավմանը, աշխարհայացքի ձևավորմանը:
- արժևորել հաղթանակի հասնելու կամքի դրսևորումը, ինքնագնահատումը:

Վերջնարդյունքներ

Խմբակի անդամները կկարողանան՝

- տարբերել փաստը տեսակետից, կատարել փաստարկում
- ամբողջական, ինքնուրույն, տրամաբանական խոսք կառուցել
- միտք շարժող հարցադրումներ անել
- եզրահանգումներ կատարել
- դրսևորել զսպվածություն, դիմացինին մինչև վերջ լսելու կարողություն
- բանավիճել կիրթ, էթիկայի սահմաններում
- տարբեր հարցերի շուրջ դիրքորոշում ունենալ
- գաղափար կազմել աշխարհում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների, Հայաստանի հիմնախնդիրների մասին
- վերլուծել գեղարվեստական կերպարների արարքների դրդապատճառները:

Տարեկան թեմատիկ պլանավորում

Հ/Հ	Բովանդակություն	Նպատակ	ժ/քանակ	Նշումներ
	Տեսական թեմաներ			
1.	Ի՞նչ է բանավեճը. բախում և դիրքորոշում	Իմանա՝ ինչ է բախում և դիրքորոշում	1	
2.	Բանավեճի ընդհանուր կառուցվածքը	Իմանա բանավեճի ընդհանուր կառուցվածքը	1	
3.	Ձևաչափի ընտրություն	Սահմանի բանավիճելու կանոններ	1	
4-5.	Բանավեճի կանոնները և էթիկան	Մշակի բանավիճելու էթիկայի կանոններ	2	
6.	Պնդում, փաստ, փաստարկ	Իմանա՝ ինչ է պնդում, փաստ, փաստարկում	1	
7.	Կառուցողական ելույթ	Կազմի կառուցողական ելույթ	1	
8.	Անդրադարձ ելույթ	Կառուցի անդրադարձ ելույթ	1	
9.	Եզրափակիչ խոսք	Կառուցի եզրափակիչ խոսք	1	
10.	Հարց ու պատասխան	Կարողանա ճիշտ հարցադրում անել, տալ տրամաբանված պատասխան	1	
	Գործնական բանավեճի թեմաներ			
11.	ԿԱՊԿՈՒ երեխաների իրավունքները պաշտպանված են	Իմանա թեման, կարողանա բանավիճել	1	
12.	Հանրակրթական դպրոցներում միավորային գնահատումը օգնում է կրթության որակի բարձրացմանը	Ընտրի դիրքորոշում, կարողանա բանավիճել	1	
13.	ՏՏ- ների կիրառումը դասերին արդյունավետ է	Թեմայի վերաբերյալ ունենա հստակ պատկերացումներ, կարողանա բանավիճել	1	
14.	Համակարգչային խաղերը բացասաբար են անդրադառնում պատանիների առողջության վրա	Տեղեկացված լինի թեմայից,կարողանա պնդումներ անել	1	
15-16.	Ատոմակայանի գործունեությունը Հայաստանում արդարացված է	Իմանա թեման, հանդես գա կողմ և դեմ դիրքորոշմամբ	2	
17.	Ասպիրանտները չպետք է ծառայեն բանակում	Ծանոթ լինի թեմային, ունենա տրամաբանված խոսք	1	

18-19.	Պատմամշակութային ժառանգությունը Հայաստանում պահպանված է	Ուսումնասիրի թեման, ունենա դիրքորոշում	2	
20-21.	Ռաֆֆու <<Սամվել>> վեպի համանուն հերոսի արարքը արդարացի էր	Կարողանա խաղալ կողմ և դեմ դիրքորոշումներում	2	
22.	Դպրոցում ստացած գիտելիքները բավարար չեն բուհ ընդունվելու համար	Կարողանա հանդես գալ տրամաբանված խոսքով	1	
23.	ՀՀ բանակը պետք է լինի պրոֆեսիոնալ	Կարողանա կիրթ մեջբերումներ անել հավաստի աղբյուրներից	1	
24-25.	Զենքի ազատ վաճառքը արդարացված չէ	Կարողանա թեմայի վերաբերյալ երկկողմանի վերլուծություն կատարել	2	
26.	Ն. Զարյանի << Երկու հանճարեղ գլուխ>> բանաստեղծության <<խոսքի արքայի>> կենսական դիրքորոշումը արդարացի էր	Իմանա բովանդակությունը, վերլուծի տրամաբանված, ընտրի դիրքորոշում	1	
27.	Պատվաստումները պետք է լինեն պարտադիր	Կարողանա բերել ճշգրիտ փաստեր, փաստարկումներ կատարել	1	
28.	Պատերազմող երկրներում ներքին ԶԼՄ-ները պետք է վերահսկվեն պետության կողմից	Կարողանա թեմայի վերաբերյալ հստակ փաստարկումներ անել	1	
29.	Կ. Զարյանի <<Տատրագոմի հարսը>> պոեմում ֆիդայիների արարքը արդարացի էր	Իմանա սյուժեն, կարողանա վերլուծել կերպարների արարքների դրդապատճառները	1	
30-31.	Սպառողների իրավունքները ՀՀ-ում պաշտպանված են	Կարողանա բերել համապատասխան փաստեր հավաստի աղբյուրներից	2	
32.	Եվրոպական արժեքները Հայաստանի քաղաքացու համար պետք է ընդունելի լինեն	Թեմայի վերաբերյալ կարողանա տրամաբանված դիրքորոշում ունենալ	1	
33-34.	Կանայք ՀՀ-ում պետք է անցնեն պարտադիր զինվորական ծառայության	Կարողանա բանավիճել երկու դիրքորոշմամբ	2	